



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Տիգրան Մեծի 4  
Հեռ.՝ (37410) 521 877, ֆաքս՝ (37410) 529 753

№ \_\_\_\_\_

ՀՀ փոխվարչապետ,  
ՀՀ տարածքային կառավարման նախարար  
պարոն Ա. Գևորգյանին

**Հարգելի պարոն Գևորգյան**

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Ձեր քննարկման եմ ներկայացնում <<Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին>> Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը և նախագծի ընդունումը հիմնավորող տեղեկանքը:

Խնդրում եմ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 43-րդ կետով սահմանված ժամկետում նախագծի վերաբերյալ Ձեր կարծիքը ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Առդիր՝ 6 էջ:

**Հարգանքով՝**

Ա.Սահակյան

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն Վ Ա Ր Չ Ա Պ Ե Տ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

<< ..... >> ..... 2014 թվականի N \_\_\_ -Ա

**Մ Ի Ջ Գ Ե Ր Ա Տ Ե Մ Չ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ա Ս Ե Դ Ծ Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով հաստատված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝

1. Սպորտի ոլորտում գործունեություն ծավալող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից զբաղեցված՝ պետական սեփականություն հանդիսացող տարածքների արդյունավետ օգտագործման նպատակով ստեղծել նշված տարածքների բեռնվածության ուսումնասիրություն իրականացնող միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ միջգերատեսչական հանձնաժողով) և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սպորտի ոլորտում գործունեություն ծավալող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման լիազորությունն իրականացնող մարմիններին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաշվարկել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով համապատասխան կազմակերպություններին հասանելիք տարածքների չափերը և մակերեսների մասին ամփոփ տեղեկատվությունը՝

տարածքների օգտագործման վերաբերյալ ծրագրի հետ միասին ներկայացնել միջգերատեսչական հանձնաժողովին:

3. Միջգերատեսչական հանձնաժողովին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված տեղեկատվությունն ստանալուց հետո հնգամսյա ժամկետում ուսումնասիրել (անհրաժեշտության դեպքում ճշգրտել) ստացված տեղեկատվությունը և ուսումնասիրության արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

4. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարին և Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ աջակցել միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքներին:

**Հայաստանի Հանրապետության  
Վարչապետ**

**Տ. Սարգսյան**

**Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ**

**Մ Ի Ջ Գ Ե Ր Ա Տ Ե Ս Չ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի**

Հ.Լպուտյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավարի տեղակալ (միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ)
Գ.Սարգսյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի պետ
Ս.Հակոբյան	Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչության մանկապատանեկան սպորտի զարգացման բաժնի պետ
Ա.Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի քարտուղարության տնտեսավարման և սպասարկման բաժնի պետ
Տ.Խաչիկյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական, ծրագրավորման և վերլուծության բաժնի պետ
Գ.Ղուկասյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պետի տեղակալ
Յու.Մամիկոնյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ
Է.Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության նորմատիվատեխնիկական և քաղաքաշինական փաստաթղթերի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Պետրոսյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության

	աշխատակազմի իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Հարությունյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի պետական գույքի կառավարման քաղաքականության վարչության պետական գույքի կռավարման քաղաքականության և ծրագրերի մշակման բաժնի առաջատար մասնագետ
Զ.Հակոբյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժնի գլխավոր մասնագետ (միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղար)

## **ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

### **<<ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> << ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<<Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին>> << վարչապետի որոշման նախագծի ընդունումը բխում է սպորտի ոլորտում գործունեություն ծավալող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից օգտագործվող պետական սեփականություն հանդիսացող տարածքների ուսումնասիրություններն իրականացնելու անհրաժեշտությունից:

Նախագծով սահմանված ժամկետում միջգերատեսչական հանձնաժողովը սպորտի ոլորտում գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման լիազորություններն իրականացնող մարմինների հետ պետք է իրականացնի սպորտի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, << կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով համապատասխան կազմակերպություններին հասանելիք տարածքների (հաշվարկային մակերեսների) հաշվարկում, բեռնվածության և շենքային տարածքների վիճակի ուսումնասիրություն:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**<<ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

<<Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին>> ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**<<ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

<<Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին>> ՀՀ վարչապետի որոշման նախագիծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնում: